2222

Մ. ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Էջմիածնի Տպարան Մայր Աթոռոյ
1917

13500

Ս. ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Էլեկտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ
1917

ԷՋՄ. ՊԵՏ. Մ[illegible]ԵՆԱԴ ՐԱՆ
ՆՎ.ՆՐ ....
№ ....

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Ե.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

Հաւաճ գտեալ հաստատեմք զայս կանոնադրութիւն Միաբանական Ուխտի ս. Աթոռոյս բաղկացեալ յ 86 յօդուածոց եւ տամք ի գործադրութիւն։

Թ. 1173.

ԳԷՈՐԳ Ս.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 1-ն Յուլիսի 1917 թ.

Ս. Էջմիածին

Ա.

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.

§ 1. Ս. Էջմիածինն է Ամենայն Հայոց Հայրապետի Աթոռը և բոլոր հայ վանքերի Մայրավանքը։

§ 2. Ս. Էջմիածնի վանքն ունի իւր միաբանութիւնը, որի Գլուխն է Ամենայն Հայոց Հայրապետը։

§ 3. Ս. Էջմիածնի միաբանութիւնն է կուսակրօնների հոգևոր ուխտ իւր յատուկ կանոնադրութեամբ։

§ 4. Ս. Էջմիածնի միաբանութեան նպատակն է՝

ա.—Աւետարանը քարոզել.

բ.—Հոգևոր կրթական գործին ծառայել.

գ.—Հայագիտութիւնն ու հայ գեղարուեստը մշակել.

դ.—Աստուածահաճոյ հիմնարկութիւններ հաստատել և պահել.

ե.—Եկեղեցու համար պատրաստել հոգևոր վարիչներ.

§ 5. Միաբանական կեանքի հիմքը Հայաստանեայց ս. եկեղեցու ընտրական և ժողովական (կոլլեգեալ) սկզբունքն է։

§ 6. Ս. Էջմիածնի միաբանութիւնը մասնակցում է Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան իւր ներկայացուցիչներով։

§ 7. Միաբանութիւնը վարում է համայնական կեանք։

§ 8. Ս. Էջմիածնի միաբանութիւնն ունի եկամտի որոշ աղբիւրներ։

Բ.

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

§ 9. Մ. Աթոռի միաբան են՝ ս. Էջմիածնում ձեռնադրուած բոլոր եպիսկոպոսները, միաբան ընդունուած վարդապետները, սարկաւագները և դպիրները։

§ 10. Միաբանութեան անդամ ընտրւում է նա, որ ունի՝

ա.—Քաղաքացիական հասունութիւն.

բ.—Բարձր կամ միջնակարգ կրթութիւն.

գ.—և հոգեկան ու մարմնական արատ չունի։

§ 11. Վանք մտնել ցանկացողը խնդիր է տալիս Վեհափառ Հայրապետի անունով, ներկայացնելով պատշաճ վկայագրեր, որն և ուղարկւում է միաբանական ժողովին։

§ 12. Միաբան ընդունող և արձակողը է միաբանական ժողովը Վեհափառ Հայրապետի հաստատութեամբ։

§ 13. Միաբանը կոչումից հրաժարուելու դէպքում խնդիր է ներկայացնում Վեհափառ Հայրապետին, որն և յանձնւում է միաբանական ժողովին։

Գ.

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՐՏՔՆ ՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ.

§ 14. Նոր ընդունուող միաբանը ուխտում է Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ կարգերին հաւատարմութիւն և Ամենայն Հայոց Հայրապետին հնազանդութիւն։

§ 15. Իւրաքանչիւր միաբան պարտաւոր է կատարել իրեն յանձնուած աշխատանքը կամ պաշտօնը։

§ 16. Իւրաքանչիւր միաբան ունի սեփականութեան իրաւունք ընդհանուր հիմունքներով։

§ 17. Ս. Էջմիածնի վանքն է օրինական ժառանգը իւրաքանչիւր միաբանի շարժական և անշարժ ստացուածքի մահուան դէպքում. բայց նա իրաւունք ունի իւր արդար վաստակը կտակով թողնելու բարեգործական և ազգօգուտ հաստատութիւնների։

§ 18. Միաբանի մահուան դէպքում ժառանգական իրաւունքը չի փոխանցւում վանքին։

§ 19. Միաբանների եկեղեցական յաջորդ աստիճանի բարձրացման համար միաբանական ժողովը միջնորդութիւն է յարուցանում Վեհափառ Հայրապետի առաջ։

§ 20. Ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստանալու համար հարկաւոր է գիտական աշխատանք ներկայացնել (աստուածաբանական և հայագիտական, մասնակի դէպքում նաև ընդհանուր գիտական)։ Ծայրագունութեան իրաւունք տրւում է նաև վկայեալ քարոզիչ վարդապետին։

§ 21. Միաբանութեան իւրաքանչիւր անդամ վանքում ստանում է հաւասարապէս՝ բնակարան, սնունդ,

վառելիք, լուսաւորութիւն, բժշկական խնամք և ուսումնական-կրթական զարգացման անհրաժեշտ միջոցները։

§ 22. Իւրաքանչիւր միաբան ստանում է, համաձայն իւր աստիճանի և պաշտօնի սահմանուած ռոճիկը։

Դ.

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.

§ 23. Միաբանութիւնն ունի՝

ա.—Տարեկան ընդհանուր,

բ.—Ներքին միաբանական և

գ.—Արտակարգ ժողովներ։

§ 24. Իւրաքանչիւր միաբան ժողովներին մասնակցում է ձայնի իրաւունքով։

§ 25. Միաբանական ընդհանուր ժողովը կազմւում է վանքի միաբաններից, տարին մի անգամ, որի զբաղման առարկաներն են՝

ա.—Ազգային-եկեղեցական ժամանակակից հարցերի քննութիւն.

բ.—Դրսի և ներսի միաբանների գործունէութեան փոխադարձ ծանօթութիւն.

գ.—Վանական հաստատութիւնների և մարմինների տարեկան գործունէութեան քննութիւն.

դ.—Հաստատութիւն հաշիւների և նախահաշիւների.

ե.—Ընտրութիւն վանական հաստատութիւնների և մարմինների պաշտօնէութեան։

§ 26. Միաբանական ընդհանուր ժողովի նախագահն է Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչը։

Ընդհանուր ժողովն ընտրում է ատենապետ և երկու ատենադպիր, մէկ տարի ժամանակով։

§ 27. Միաբանական ներքին ժողովները գումարւում են ամիսը մի անգամ, որի քննութեան առարկաներն են՝

ա.—Վանական հաստատութիւնների և մարմինների ամսօրեայ հաշիւները.

բ.—Ընթացիկ խնդիրներ։

§ 28. Միաբանական ժողովները օրինական են, երբ ներկայ են միաբանների կիսից աւելին։

§ 29. Ժողովի որոշումները վաւերական են, երբ ստանում են ձայների կիսից աւելին և հաստատւում Վեհափառ Հայրապետից։

Ե.

ՎԱՆԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

(Ընդհանուր կանոններ).

§ 30. Ս. Էջմիածնի ներքին կեանքը կառավարում են վարչական մարմինները և հաստատութիւնների կառավարիչները։

§ 31. Վանական հաստատութիւնները ունին կառավարիչներ, իսկ վարչական մարմինները՝ խորհուրդներ։

§ 32. Ս. Հռիփսիմէի և Գայիանէի վանքերն ունին վանահայրեր, իսկ Զուարթնոցը՝ տեսուչ, որոնց ընտրում է միաբանական ընդհանուր ժողովը։

§ 33. Խորհուրդների անդամներին և հաստատութիւնների կառավարիչներին ընտրում է միաբանական ժողովը և առաջարկում ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետի։

§ 34. Վանական հաստատութիւնները ու խորհուրդները իրենց ներքին գործառնութեան համար ունին յատուկ հրահանգներ։

§ 35. Խորհուրդները և կառավարիչները պաշտօնը ստանձնելիս յանձնողական–ստացողական արձանագրութիւն են կազմում։

§ 36. Վանական վարչական մարմիններն ու հաստատութիւնները ունին՝ դիւան, կնիք, ժապաւինեալ հաշուեմատեան, գոյքի ու կայքի տուփար։

§ 37. Վանական հաստատութիւններն ու վարչական մարմիններն, ունին՝ իրենց բիւջեները և այդ սահմանում գործում են անկախ։

§ 38. Այն պաշտօնները, որոնց համար հնարաւոր չէ միաբաններից ընտրել, կարելի է աշխարհականի յանձնել ընտրութեամբ։

Զ.

ՎԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

§ 39. Վանական խորհուրդը կազմուած է վանական հաստատութիւնների կառավարիչներից և վարչական մարմինների նախագահներից։

§ 40. Խորհուրդն ընտրում է իւր անդամներից՝ ատենապետ և քարտուղար։

§ 41. Խորհուրդը քննում և ներկայացնում է միաբանական ընդհանուր ժողովին.

ա.—Վանական վարչական մարմինների և հաստատութիւնների առաջարկները և զեկուցումները.

բ.—Տեղեկագրերը, հաշիւները, նախահաշիւները, ամսօրեայ ստուգութիւնները.

գ.—Հսկում է միաբանական ընդհանուր ժողովների վաւերացած որոշումների կատարմանը.

դ.—Մշակում է հրահանգներ վանական հաստատութիւնների և վարչական մարմինների համար, ներկայացնում է միաբանական ընդհանուր ժողովին, որն ընդունելուց յետոյ առաջարկում է ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետի։

§ 42. Ս. Էջմիածնի Վանքն ունի իւր գանձարանը անկախ Մ. Աթոռի կենդրոնական գանձարանից։

§ 43. Գանձարանն ունի գանձապահ, որին ընտրում է միաբանական ժողովը և հաշուապահ։

§ 44 Վանական խորհրդի իւրաքանչիւր անդամ իւր տեսչութեան վերաբերեալ խնդիրների համար անհատապէս, իսկ Վանական Խորհրդի գործունէութեան համար հաւաքաբար, պատասխանատու է միաբանական ժողովին։

Է.

ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆ.

§ 45. Մ. Աթոռն ունի իւր Ճեմարանը որի պահպանութեանը նպաստում է ս. Էջմիածնի վանքը իւր միջոցներով։

§ 46. Գ. Հոգևոր Ճեմարանի տնտեսական վարչութեան մէջ մտնում է միաբանական ժողովից ընտրուած ներկայացուցիչը։

Ը.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

§ 47. Ուսումնական Խորհուրդը կազմուած է երեք անդամից։

§ 48. Խորհուրդի գործունէութեան շրջանն է քննել՝

ա.—Այն շարադրութիւնները, որ ներկայացնում են

միաբանները Մ. Աթոռի հաշուով հրատարակելու.

բ.—Այն կրօնա-բարոյական եկեղեցական գրուածքները, որոնք յանձնանարուում են Վեհափառ Հայրապետից։

գ.—Վարում է «Արարատ»-ի խմբագրութիւնը.

դ.—Մրցանակներ է նշանակում կրօնական-եկեղեցական-հայագիտական գրուածքների համար։

§ 49. Խորհուրդը գրուածքների քննութեան համար կարող է դիմել ձեռնահաս և կարող անձանց։

Թ.

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ.

§ 50. Մայր Տաճարի ներքին բարեկարգութեան անմիջական հսկողն է Լուսաբարապետը, որն ունի աւագ օգնական վարդապետ և կրտսեր օգնական երկու սարկաւագ։

§ 51. Լուսաբարապետի պարտականութիւնները են՝

ա.—Հսկել եկեղեցում աստուածային պաշտաման և եկեղեցական կարգերի անթերի կատարման.

բ.—Անկորուստ պահել եկեղեցական անօթները, զարդերը, գրքերը, զգեստները և գոյքը։

§ 52. Լուսաբարապետի կարգադրութիւններն եկեղեցում պարտադիր են՝

ա.—Աստուածպաշտութեան ժամանակ միաբանների համար.

բ.—Տաճարի պաշտօնեաների համար։

§ 53. Մայր Տաճարն ունի իւր Ժամօրհնողը։

§ 54. Մայր Տաճարն ունի միայուն երգեցիկ խումբ և խմբապետ։

Ժ.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

§ 55. Մատենադարանի նպատակն է նպաստել հայագիտութեան ուսումնասիրութեան, որի համար պէտք է աշխատել ի մի հաւաքել ամենուր ցրուած հայերէն ձեռագրերը և հայագիտութեան վերաբերեալ տպագիր հայ և օտարազգի լեզուներով բոլոր հրատարակութիւնները և հայ մամուլը։

§ 56. Մատենադարանը կառավարում է մատենադարանապետը իւր օգնականներով։

§ 57. Մ. Աթոռն ունի իւր ընթերցարանը։

ԺԱ.

ԹԱՆԳԱՐԱՆ.

§ 58. Թանգարանի նպատակն է նպաստել հայ անցեալ և ներկայ կեանքի ուսումնասիրութեան, որի համար պէտք է ի մի ժողովել ազգային և եկեղեցական մշակոյթի ամենատեսակ հայ և օտարազգի արտադրութիւններն ու յուշարձանները։

§ 59. Թանգարանն ունի հետևեալ բաժանմունքները՝

ա.—Եկեղեցական թանգարան.

բ.—Ազգային հնութիւնների թանգարան, ազգագրական բաժնով.

գ.—Պատկերասրահ.

դ.—Զուարթնոցի թանգարան։

§ 60. Թանգարանը կառավարում է թանգարանապետը իւր օգնականներով։

—

§ 61. Մ. Աթոռն ունի Վանական Հնագիտական Ընկերութիւն հայրենի հնութիւնները կործանումից պահպանելու

§ 62. Վանական Հնագիտական Ընկերութիւնն ունի իւր կանոնադրութիւնը։

—

ԺԲ.

ՏՊԱՐԱՆ.

§ 63. Տպարանի նպատակն է ծառայել ազգային լուսաւորութեան գործին, հրատարակելով կրօնա-բարոյական, հայագիտական, գրական-գեղարուեստական աշխատանքներ։

Սոյն նպատակին ծառայելու համար տպարանը պէտք է արդիւնաբերական հիմքերով կառավարուի։

§ 64. Տպարանն ունի իւր կառավարիչը և մասնագէտ օգնականը։

§ 65. Կառավարիչը հսկում է տպարանի, ձուլարանի, կազմատան, գրատան և թղթատան վրայ։

§ 66. Տպարանում հրատարակւում են Մ. Աթոռի պաշտօնական, գիտական թերթերը։

ԺԳ.

ՀԻՒՐԱՏՈՒՆ.

§ 67. Հիւրատանն ընդունւում են՝
ա.—Դրսից եկած միաբանները,
բ.—Ուխտաւորները,
գ.—Պաշտօնական այցելուները։

§ 68. Հիւրատան կառավարիչն է հիւրնկալը։

ԺԴ.

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

§ 69. Մ. Աթոռի հիւանդ միաբանների համար կայ հիւանդանոց։

§ 70. Հիւանդանոցն ունի իւր բժիշկը, դեղատունը, դեղագործը և հիւանդապահները։

§ 71. Հիւանդանոցն ունի իւր կառավարիչը։

ԺԵ.

ՍԵՂԱՆԱՏՈՒՆ.

§ 72. Միաբանութիւնն ունի իւր եղբայրական սեղանատունը։

§ 73. Սեղանատունն ունի իւր կառավարիչը, որի հսկողութեան տակ են գտնւում խոհանոցը և մառանը։

ԺԶ.

ՄԹԵՐԱՆՈՑ-ՀԱՆԴԵՐՁԱՏՈՒՆ

§ 74. Միաբանութեան սենեակների և հիւրատան կահաւորութեան համար կայ մթերանոց-հանդերձատուն։

§ 75. Մթերանոց-հանդերձատունն ունի իւր կառավարիչը, որը հոգում է միաբանների սենեակների միօրինակ կահաւորութիւնը։

§ 76. Հանդերձատանը հաւաքւում են վախճանուած միաբանների անձնական գոյքերը։

ԺԷ.

ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

§ 77. Վանական Կառավարութիւնը՝ ա. կառավարում է ս. Էջմիածնապատկան բոլոր կալուածները, բ. հսկում է նրանց եկամուտների վրայ, գ. հսկում է վանքի տնտեսական հիմնարկութիւնների (էլէքտրական կայարան, փուռ, ագարակ, շտեմարան, գինետուն, և այլն). միաբանական բնակարանների, գերեզմանատան բարեզարդութեան և վերանորոգութեան վրայ։

§ 78. Վանական Կառավարութիւնը կազմուած է հինգ անդամից։

§ 79. Վանական Կառավարութիւնը պէտք է ունենայ Վանքի բոլոր կալուածագրերի և յատակագծերի վաւերական պատճէնները։

ԺԸ.

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՄԱՐՄԻՆ.

§ 80. Վանական բոլոր հաստատութիւնների և մարմինների դրամական հաշիւները քննում է Վերստուգիչ Մարմինը։

§ 81. Վերստուգիչ Մարմինը բաղկացած է երեք անդամից։

§ 82. Վերստուգիչ Մարմինը իւր դիտողութիւնները, նկատողութիւնները յանձնում է Վանական Խորհրդին։

§ 83. Վերստուգիչ Մարմինը բացի կանոնադրութեամբ որոշած ստուգութիւնները, կարող է արտակարգ վերստուգութիւններ կատարել։

§ 84. Արտակարգ վերստուգութիւններ կատարւում են երբ, որոշում է Միաբանական Ժողովը ինքը, Վերստուգիչ Մարմինը և երբ խնդիր է յարուցանում վանական որևէ վարչական մարմին կամ խորհուրդ։

ԺԹ.

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ.

§ 85. Սոյն կանոնադրութեան մէջ կարող է փոփոխութիւն լինել Միաբանական Ընդհանուր Ժողովի $^{2}/_{5}$-ի ցանկութեամբ։

§ 86. Մինչև նոր կանոնադրութեան հաստատուելը գործադրւում է հինը։



ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011980